ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 533-Ա **02 նոյեմբերի 2023 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N 61-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով

որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2013 թվականի ապրիլի 12-ի «Աղետների ռիսկերի նվազեցման Գեղարքունիքի մարզային թիմի աշխատակարգը հաստատելու մասին» N 61 - Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«3. Աղետների ռիսկերի նվազեցման Գեղարքունիքի մարզային թիմի գործունեության համակարգումը վերապահել մարզպետի տեղակալ Ռուբիկ Նավոյանին».

2) որոշման հավելվածի 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«3. Թիմի աշխատանքներին կարող են ներգրավվել պետական մարմինների տարածքային ստորաբաժանումների, մարզպետի աշխատակազմի, մարզային ենթակայության կազմակերպությունների ու հիմնարկների, հասարակական կազմակերպությունների, մասնագիտացված կառույցների ներկայացուցիչներ, ինչպես նաև անկախ փորձագետներ:»:

02.11.2023

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ 08428824

Ք. Գավառ